


Մաթեմատիկա - I փուլ 5-րդ դասարան, 150 րոպե

1. Հետևյալ թվերից ո՞րն է ամենափոքրը.

- 1) 1001 2) 969 3) 990 4) 971

2. Ո՞ր թիվն է գրառված նկարում:

- 1) 675 2) 657 3) 576 4) 567



3. Գտնել 1, 2, 4, 7, 11, .. հաջորդականությունում գրված թվերի օրինաչափությունը և գտեք հաջորդ թիվը:

- 1) 16 2) 17 3) 15 4) 18

4. Գրիգորի մայրը պատրաստել է երեք տեսակ կարկանդակներ: Հայտնի է, որ կարտոֆիլով կարկանդակների քանակը 4-ով պակաս է պանրով կարկանդակների քանակից, իսկ մսով կարկանդակները 5-ով ավելի են կարտոֆիլով կարկանդակների քանակից: Ո՞ր տեսակ կարկանդակներն են ամենաշատը:

- 1) կարտոֆիլով 2) մսով 3) պանրով 4) հնարավոր չէ ասել

5. Ուղիղ գծի վրա նշված են 4 տարբեր կետեր: Քանի՞ հատ հատված կա, որոնց ծայրակետերն այդ կետերից են:


- 1) 3 2) 4 3) 5 4) 6

6. Իրարից տարբեր չորս բնական թվերի գումարը հավասար է 17: Գտնել այդ թվերից ամենամեծի հնարավոր ամենափոքր արժեքը:

- 1) 5 2) 6 3) 8 4) 9

7. Հետևյալ թվերից ո՞րն է ամենալավը նկարագրում ջերմաչափի ցուցմունքի արժեքը (տես նկարը):

- 1) 32 2) 35 3) 27 4) 30



8. Շախմատի խմբակում կա 11 տղա և 5 աղջիկ: Ամեն ամիս խմբակին միանում է 1 տղա և 3 աղջիկ: Քանի՞ ամիս անց խմբակում տղաների և աղջիկների քանակը կհավասարվի:

- 1) 5 2) 4 3) 3 4) երբեք չի հավասարվի

9. Գումարման գործողության մեջ 3 թվանշաններ ջնջվել են: Գտնել ջնջված թվանշանների գումարը:

- 1) 15 2) 16 3) 17 4) 18

$$\begin{array}{r}
 2666 \\
 + \quad \square \square 31 \\
 \hline
 709\square
 \end{array}$$

10. 217մետր երկարություն ունեցող գնացքը բաղկացած է 7 մարդատար և 20 բեռնատար վագոններից: Մարդատար վագոնը 4 մետրով երկար է բեռնատար վագոնից: Որքա՞ն է մարդատար վագոնի երկարությունը:

- 1) 3 2) 7 3) 9 4) 11


Մաթեմատիկա - I փուլ 5-րդ դասարան, 150 րոպե

11. Դարակում կա 7 հատ սպիտակ, 8 հատ կապույտ և 5 հատ սև գնդիկ: Առանց նայելու քանի՞ գնդիկ է պետք վերցնել դարակից, որ նրանց մեջ լինեն բոլոր գույնի գնդիկներ:

- 1) 13 2) 16 3) 20 4) այլ պատասխան

12. Դասարանի 30 աշակերտներից 17-ը խաղում են շախմատ, 11-ը խաղում են շաշկի, իսկ 7-ը խաղում են և՛ շախմատ և՛ շաշկի: Դասարանի աշակերտներից քանի՞ սը չեն խաղում ո՛չ շախմատ, ո՛չ շաշկի:

- 1) 2 2) 5 3) 9 4) 19



13. Գտնել նկարում պատկերված ուղղանկյան պարագիծը, եթե փոքրիկ վանդակի կողմի երկարությունը մեկ միավոր է:

- 1) 16 2) 22 3) 24 4) 32

14. Պարզել օրվա ժամը, եթե հայտնի է, որ կեսօրից անցել է 3 անգամ ավելի շատ ժամանակ, քան մնացել է օրվա ավարտին:

- 1) առավոտ 08:00 2) առավոտ 09:00 3) 20:00 4) 21:00

15. Դարակում հնարավոր է շարել 25 հատ հաստ գիրք, կամ 45 հատ բարակ գիրք: Քանի՞ հատ բարակ գիրք է հնարավոր ավելացնել դարակում, եթե այնտեղ արդեն կա 15 հատ հաստ գիրք:

- 1) 15 2) 18 3) 20 4) այլ պատասխան

16. 65 մարզիկներից բաղկացած թիմը ժամանում է հյուրանոց: Հյուրանոցում կան միայն 3 և 4 տեղանոց համարներ: Ամենաքիչը քանի՞ սենյակ պետք է վերցնել, մարզիկներին տեղավորելու համար (սենյակները պետք է ամբողջությամբ զբաղեցվեն):

17. Մեքենան 450կմ ճանապարհին անցավ 90կմ/ժ արագությամբ, որից հետո շարժվեց ևս 40 րոպե: Ընդհանուր առմամբ քանի՞ րոպե շարժվեց մեքենան:

18. Առաջին դաշտից հավաքեցին 1 տոննա 800կգ կարտոֆիլ, իսկ երկրորդ դաշտից՝ 3 անգամ ավելի քիչ: Քանի՞ պարկում է հնարավոր լցնել ողջ կարտոֆիլը, եթե մեկ պարկում տեղավորվում է 40կգ կարտոֆիլ:

19. Քանի՞ հատ երկնիչ թիվ կա, որի թվանշաններից մեկը կենտ է, իսկ մյուսը գույգ:

20. Քանի՞ գրամ ներկ է անհրաժեշտ նկարում պատկերված տուփը բոլոր կողմերից ներկելու համար, եթե մեկ վանդակը ներկելու համար ծախսվում է 4 գրամ ներկ:

